

Ե դարուն դարձեալ Ղաղար Փարպեցի կը խօսի զբօսանքի գորդերու մասին: Առ Վահան Մամիկոնեան իր դրած թուղթին մէջ ան կ'ըսէ. «սննդակիցք էաք ձեզ եւ խաղակիցք, կրելով ի խաղու զարկանելիս ձեր զկնի ձեր»⁽⁹⁾: Արդէն գորդի հոմանիշներու կարգին ցոյց տուած եմ որ արկանելի կը նշանակէ խաւաւոր գորդ: Փարպեցի կ'ըլլայ առաջին անգամ արկանելի (գորդ) հոմանիշը տուողը, դարձեալ ինքը կ'ըլլայ առաջին անգամ մեր մօտ զբօսանքի գորդերու գոյութիւնը յիշողը:

450ական թուականներէն Խորենացին ալ մեզի կու տայ վկայութիւններ բազմականներու մասին: Սիւնեաց Բակուր նահապետին տուած խնձոյքին ատեն Տրդատ Բագրատունի կը ցանկայ հարձի մը, «խկ Տրդատայ բուն հարեալ ի կինն, յիւրն քարչեաց ի բազմականն». Բակուր չ'ուզեր տեղի տալ եւ կը յարձակի Տրդատի վրայ, «յոսն կացեալ Տրդատայ, ծաղկակալ ստեղբն իբր զինու վարեցաւ, նա եւ զբարձակիցսն ի բազմականացն ի բաց պուղեաց»⁽¹⁰⁾:

Ինչպէս արդէն տեսանք, գորգերը եկեղեցական կահին եւ անօթներուն մէջ շատ կարեւոր տեղ կը բռնէին: Ուխտանէսի նկարագրութեան համաձայն Մովսէս Բ կաթողիկոսի (574-604) հայրապետանոցին կահին եւ զգեստներուն մէջ կային «եւ զվական կաթողիկոսին մետաքսեայ կազմեալ յականց՝ եւ յսկոյ՝ եւ ի մարգարտէ, եւ զայլ զգենլիան եւ զարկանելիս քահանայից եւ սարկաւազաց»⁽¹¹⁾:

Դարձեալ է դարուն Աղուանից Զուանչիւր իշխանին քեռորդի պատրիկ մը կը հարածէր Զուանչիւրը դաւաճանօրէն սպաննողը, «ի վերնակողմն երթային յԱրցախունեաց դաւառն նմին իրաց քինախնդիր. եւ զտուն հօր նորա աւարեալ քանդէին հրդեհաբոց կիզմամբ, եւ ըզմետաքսառէջ եւ զկերպասանիւթ գիպակս, եւ զըոյնզըոյն կապերոս, զոսկի եւ զարծաթ եւ զընտիր ընտիրս կահուց եւ սպասուց աւար առեալ»⁽¹²⁾: Կապերոսը հոս ալ անխաւ գորդի, քիլիմի իմաստով գործածուած է: Աղուանից աշխարհի սուժաք (չամախ) կապերտները մինչեւ մեր օրերը դեռ կը պահէին իրենց համբաւը:

Ութերորդ դարէն մեծարժէք օտար վկայութիւն մը կու գայ վաւերացնել ցարդ հոս իմ ներկայացուցած հայագրիւր վկայութիւնները: Այս վկայութիւնը ցոյց կու տայ որ այս դարուն գորդարուեստը եւ գորդարճեստը համաշխարհային համբաւ ստանալու չափ զարգացած էր պատմական Հայաստանի այն ատենուան սահմաններուն մէջ: Օտար այս մեծարժէք վկայութիւնը կը պարտինք Իպն Խալտուն Արաբ

(9) Պատ. Հայոց: Վենետիկ, 1891, 644: Փարպեցիի այս վկայութեան Արկանելին՝ Հ. Հացունի վերարկու, իսկ Ա. Արեղեան խաղալիք վերածած էին: Այս մասին տես իմ ուղղումը՝ Պոսթոնի ՀԱՅՐԵՆԻՔ ամսագրին մէջ, 1934, Սեպտ. էջ 160-1, Ճշգրտմանը:

(10) Պատ. Հայոց: Վենետիկ, 1881, էջ 302:

(11) Պատ. Հայոց: Էջմիածին, 1871, Բ. մաս, էջ 66:

(12) Պատ. Աղուանից Աշխարհի: Մովսէս Կաղանկատուացոյ: 1913, Թիֆլիս, էջ 256-7: